ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԵՑ ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 27-ին, Ս. Խաչի գյուտի տոնին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մատուցված Ս. Պատարագից հետո Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ և Մայր. Աթոռի միաբանության մասնակցությամբ տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ 1999 թ. հոկտեմբեր 27-ին ՀՀ Ազգային ժողովում կատարված ոճրագործության զոհերի՝ ԱԺ Նախագահ Կարեն Դեմիրճյանի, Վարչապետ Վազգեն Սարգսյանի, ԱԺ պատգամավորներ Ցուրի Բախշյանի, Ռուբեն Միրոյանի, Հենրիկ Աբրահամյանի, Արմենակ Արմենակյանի, Միքայել Քոթանյանի և նախարար Լեոնարդ Պետրոսյանի, ինչպես նաև օրեր առաջ Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաք Մոսկվայի Մշակույթի Տանը կատարված սոսկալի ահաբեկչության զոհերի:

Հոգևորականաց դասն աղոթք բարձրացրեց առ Աստված, որպեսզի Տերը խաղաղության և լույսի ներքո պահի զոհերի հոգիները՝ երկնային օրհնություն շնորհելով նրանց շիրիմներին: